

ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ
nunemkrtchyan.69@mail.ru

ORCID iD: 0009-0006-0459-1911

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-218

ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ (1889-1923)

Բանալի բառեր - Իսահակյան, Թումանյան, էպիստոլյար ժառանգություն, դարաշրջան:

Ամփոփում

Ուսումնասիրության մեջ քննության ենթ առել Ավետիք Իսահակյանի և Հովհաննես Թումանյանի միջև նամակագրությունը (1889-1923): Տաղանդավոր գրողների միջև նամակագրությունն արթնացնում է հետաքրքրություն ոչ միայն հետազոտողների՝ գրականագետների, պատմաբանների շրջանում, այլև ընթերցողական լայն շրջանակներում: Այդ նամակներն օգնում են բացահայտել նրանց յուրակերպ, հարուստ ներաշխարհը, ապրած բարդ ու դարձդարձիկ ժամանակաշրջանը, անդրադառնում հեղինակների և՛ անձնական կյանքի հետազոծին, այս կամ այն երկի ստեղծագործական պատմությանն ու մտահղացման շարժառիթներին, պատմաքաղաքական ու ազգային իրադարձությունների վերաբերյալ նրանց հայացքներին: Թե՛ Իսահակյանի, թե՛ Թումանյանի էպիստոլյար ժառանգությունը հսկայական է և բազմաժանր: Նրանք նամակագրություն ունեին ինչպես համաշխարհային համբավ ունեցող արվեստագետների, այնպես էլ նրանց հետ, ում անունները պատմության մեջ մնացել են միայն այս մեծերի «թղթակիցը» լինելու շնորհիվ: Ուսումնասիրության մեջ կանդրադառնանք նամակներին նաև այս հայեցակետով: Հայտնի փաստ է, որ Իսահակյանին և Թումանյանին ամենից շատ հուզող նրբալար թեմաներից է հայրենիքի ճակատագիրը: XIX դարավերջը և XX դարի առաջին երկու տասնամյակները եղան հայ ազգային-քաղաքական կյանքի մեծ հեղաբեկումների տարիներ: Հայրենիքի անորոշ, անմխիթար դրությունը և կասկածելի ապագան նրանց դարձրին առավել զգայուն,

հոռետես, երբեմն՝ խիստ դրամատիկ ու ողբերգական: Ուսումնասիրության կենտրոնական խնդիրներից մեկն է հայրենիքի ճակատագրի քննությունը նրանց նամակներում: Ըստ այդմ, մեր հավաքագրած նյութը բավարար է երկու գրողներին միավորող հիմնական այս թեման ներկայացնելու, ապա ստեղծագործական ու մարդկային մյուս հետաքրքրություններն ուրվագծելու համար:

Հետազոտության նպատակն է՝ ա. զուգադրաբար քննել երկու գրողների նամակագրության մեջ երևացող գեղագիտական առնչությունները, գաղափարների համընկնումները, բ. դիտարկել Ավ. Իսահակյանի և Հովհ. Թումանյանի հոգեբանական, աշխարհաճանաչողական համակարգը:

Խնդիրներն են՝ ա. Անդրադառնալ Իսահակյանի և Թումանյանի նամակներում ներկայացված այն դատողություններին, որոնք, որպես պատմական և գրական երևույթ, էպիստոլյար ժանրի նմուշներ, գրեթե չեն մեկնաբանվել և գիտական ուսումնասիրության ու պարզաբանման կարիք ունեն, բ. դրանց քննությամբ տալ ոչ միայն նամակագիրների անձնային բնութագիրը, հասկանալ նրանց հոգեբանական ապրումները, մարդկային հարաբերությունները, տեսնել նրանց «ոչ պաշտոնական» դիմանկարները, այլև գրապատմական ու ազգային ժամանակի նկարագիրը:

Աշխատանքը համակարգել ենք թեմատիկ-գաղափարական բաժնումներով:

Համեմատական քննության արդյունքները ներկայացրել ենք Եզրակացության մեջ:

NUNE MKRTCHYAN

PhD in Philology, Associate Professor

Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA

nunemkrtchyan.69@mail.ru

ORCID iD: 0009-0006-0459-1911

FOLLOWING THE TRACES OF ISAHAKYAN AND TUMANYAN'S CORRESPONDENCE (1889-1923)

Keywords - Isahakyan, Tumanyan, epistolary heritage, the era.

Abstract

In the study, we examined the correspondence between Isahakyan and Tumanyan (1889-1923). The correspondence between talented writers arouses interest not only among researchers, literary critics, historians, but also among wide reading circles. These letters help reveal their unique, rich inner world, the complex and turbulent period they lived through, and provide an opportunity to reflect on the authors' personal life trajectory, the creative history of this or that country and the motives for their conception, and their views on historical, political, and national events. The epistolary heritage of both Isahakyan and Tumanyan is vast and multi-genre. They corresponded with both world-renowned artists and those whose names have remained in history only thanks to their being the "correspondents" of these greats. In the study, we will also look at the letters from this perspective. It is a well-known fact that one of the most delicate topics that concerned the great Isahakyan-Tumanyan was the fate of the homeland. The end of the 19th century and the first two decades of the 20th century were years of great upheavals in Armenian national and political life, which saddened and often agitated the writers. The uncertain, inconsolable state of their homeland and its doubtful future made them more sensitive, pessimistic, and sometimes highly dramatic and tragic. One of the central issues of the study is the examination of the fate of their homeland in their letters. Accordingly, the material we have collected is sufficient to present this main theme that unites the two writers, and then to outline their other creative and human interests. The aim of the research is: a. to comparatively examine the aesthetic connections and overlaps of ideas evident in the correspondence of the two writers, b. to observe the psychological and world-cognitive systems of Isahakyan and Tumanyan. The tasks are: a. To address the judgments presented in the letters of Isahakyan and Tumanyan, which, as historical and literary phenomena, samples of the epistolary genre, have hardly been commented on and are in need of scientific study and clarification, b. by examining them, to provide not only the personal characteristics of the letter writers, to understand their psychological experiences, human relationships, to see their "unofficial" portraits, but also a description of the literary-historical and national time. We have organized the work into thematic and

ideological divisions. We have presented the results of the comparative examination in the Conclusions.

НУНЕ МКРТЧЯН

*Кандидат филологических наук, доцент
Институт литературы им. Манука Абеяна НАН РА
nunemkrtchyan.69@mail.ru
ORCID iD: 0009-0006-0459-1911*

ПО СЛЕДАМ ПЕРЕПИСКИ ИСААКЯНА И ТУМАНЯНА (1889–1923)

Ключевые слова - Исаакян, Туманян, эпистолярное наследие, эпоха.

Аннотация

В исследовании мы рассмотрели переписку Исаакяна и Туманяна (1889–1923). Переписка талантливых писателей вызывает интерес не только у исследователей, литературоведов, историков, но и у широкого круга читателей. Эти письма помогают раскрыть их неповторимый, богатый внутренний мир, сложный и бурный период, который они пережили, дают возможность поразмышлять о личном жизненном пути авторов, творческой истории той или иной страны, мотивах их замысла, об их взглядах на исторические, политические и национальные события. Эпистолярное наследие Исаакяна и Туманяна обширно и многожанрово. Они переписывались как с всемирно известными деятелями искусства, так и с теми, чьи имена остались в истории лишь благодаря их «корреспондентству». В исследовании мы также рассмотрим письма с этой точки зрения. Общеизвестно, что одной из самых деликатных тем, волновавших великого Исаакяна-Туманяна, была судьба родины. Конец XIX века и первые два десятилетия XX века были годами больших потрясений в армянской национальной и политической жизни, что опечалило и зачастую взволновало писателей. Неопределённое, безутешное состояние родины, её сомнительное будущее делали их более чувствительными, пессимистичными, а порой и крайне драматичными и трагичными. Одна из центральных тем исследования — рассмотрение судьбы родины в их письмах. Соот-

ветственно, собранного нами материала вполне достаточно, чтобы представить эту основную тему, объединяющую двух писателей, а затем обрисовать их другие творческие и человеческие интересы. Целью исследования является: а) сравнительное изучение эстетических связей и идейных пересечений, прослеживающихся в переписке двух писателей, б) рассмотрение психологических и миропознавательных систем Исаакяна и Туманяна. Задачи: а) рассмотреть суждения, изложенные в письмах Исаакяна и Туманяна, которые, будучи историко-литературными явлениями, образцами эпистолярного жанра, практически не комментировались и нуждаются в научном изучении и уточнении; б) исследуя их, дать не только личные характеристики авторов писем, понять их психологические переживания, человеческие взаимоотношения, увидеть их «неофициальные» портреты, но и характеристики литературно-исторического и национального времени. Мы структурировали работу по тематическому и идеологическому направлениям. Результаты сравнительного исследования представлены в Заключении.

Ներածություն

Նամակը, հատկապես նշանավոր անհատի նամակը, ինչ-որ տեղ վերածում է գրական յուրովի ժանրի և պարզում, թե ինչքան հնարավորություններ կարող է ընձեռել հեղինակին՝ արտահայտելու իր խոհերը, տեսակետները, վերաբերմունքն աշխարհի, երևույթների ու մարդկանց մասին. «Նամակագրական ժանրը գեղարվեստական խոսքի պատմականորեն ի հայտ եկած ձև է... այն սկզբում առաջացել է մասնավոր, իսկ ավելի ուշ՝ պետական նամակագրության մեջ, ապա վերածվել գրական պատումի յուրօրինակ արտահայտության» (Զերնեց, 1982: 6):

Էպիստոլյար ժանրի հրաշալի նմուշներ են Իսահակյանի և Թումանյանի նամակները. «Նամականին անվանում են նաև էպիստոլյար գրականություն» (Զրբաշյան Է., Մախչանյան Հ., 1972: 204), ուստի, ավելորդ է խոսել նրանց նամակագրության մեծ արժեքի մասին թե՛ գրականագետների, թե՛ ընթերցողների լայն շրջանակի համար: Հավաքագրված նամակները վերստեղծում են հայ մշակութային և հասարակական կյանքի լայն պատկերը, խոսում են հայ գրականության

տարբեր ուղղությունների պայքարի, ճշմարտության որոնման, բարոյական բարձր պաթոսի և հումանիստական վառ իդեալներ հաստատելու ցանկության մասին:

Իսահակյանի և Թումանյանի գրած յուրաքանչյուր նամակ վերածվում է անկախ, հետաքրքրաշարժ և ուսանելի պատմության՝ այդ դարաշրջանի ամենահետաքրքիր մարդկանց, նրանց ընկերությունների և անհամաձայնությունների՝ գեղագիտական ճաշակի և սոցիալական նկրտումների մասին պատմող: Նամակագրական ժանրը գրողներին հնարավորություն է տալիս բացահայտել իրենց ներաշխարհը, բնավորության գծերը, հաստատել վստահության հարաբերություններ ընթերցողի հետ. չէ՞ որ վստահության վրա կենտրոնացումը նամակագրական ժանրի ամենակարևոր առանձնահատկությունն է: Այն իր ամենամեծ զարգացումն ստացավ սենտիմենտալ գրականության մեջ, «Եվ սա պատահական չէ, քանի որ սենտիմենտալ գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում անհատի ներաշխարհին, մարդու զգացմունքներին, նրա մտերիմ ապրումներին» (Ֆրեյդենբերգ, 1997: 226):

Իսահակյանի և Թումանյանի ոճի անհատական հիմքերը

Պատահական չէ, որ տաղանդավոր գրողների միջև նամակագրությունը հայ գրականության մեջ միշտ հետաքրքրել է ոչ միայն գրականագետներին, այլև ընթերցողներին: Դրանք օգնում են ավելի լավ հասկանալ ինչպես գրողների, այնպես էլ ժամանակաշրջանը: 1898-1923 թթ-ին հայ կյանքն ալեկոծված էր արևմտահայերի ջարդերի սարսափելի լուրերով և հայ գաղթականների սրտակեղեք պատմություններով: Ամեն գիտակից հայ, հատկապես մտավորական, ծանր մտահոգություններ ուներ արևմտահայերի և հայկական հարցի ճակատագրի նկատմամբ: Իսահակյանը վերհիշում է, որ Հովհ. Թումանյանն ինչ-որ առաքելությամբ շրջում էր Թիֆլիսից Ախալցխա և Ախալքալաք, Երևան, Էջմիածին, հետաքրքրվում գաղթականների վիճակով և տետրեր էր լցնում վերջիններիս պատմածներով:

Ցանկացել ենք հոգվածում ընթերցողին ներկայացնել նամակագրության ամենակարևոր, առանցքային պահերը և բացատրել

Իսահակյանի և Թումանյանի աշխարհայացքի և ստեղծագործական համաձայնություններն ու հակասությունները, բացահայտել ենք գրողների դիրքի բարդությունը դարաշրջանի հասարակական և գրական պայքարում: Իսահակյանի՝ Թումանյանին գրած նամակները բացառիկ արժեք ունեն: «Ավ. Իսահակյանի ակադեմիական հրատարակության XIII-XIV հատորները ներառում են մինչև այսօր հայտնի և անհայտ, ինչպես նաև բանաստեղծի ընտանեկան արխիվում պահվող անտիպ նամակները» (Իսահակյան, 2020: 7) և մեջբերումներն էլ այդ հրատարակությունից են:

Իսահակյանի նամակագրությունը Թումանյանի հետ սկսվել է XIX դարասկզբին և շարունակվել է համարյա քառորդ դար. հատկապես ինտենսիվ են եղել 1902-1905 թթ. գրած նամակները, որոնք, լինելով նրանց անհատական օրագրերի լրացում, ունեն գրապատմական և մշակութային ակնառու արժեք:

Հայտնի է, որ թե՛ Իսահակյանի և թե՛ Թումանյանի էպիստոլյար ժառանգությունը հսկայական է: Նրանք նամակագրություն ունեին ինչպես համբավ ունեցող գրողների, արվեստագետների, այնպես էլ նրանց հետ, ում անունները հայտնի են մնացել միայն «թղթակից» լինելու պատճառով «Կարող ես ինձ հայտնել, թե Ե. Թովիշյանը¹ Թիֆլիզումն է հիմա. ի՞նչ է անում: Արշակ Ղազարյանի² մասին կարող ես գրել»: (Իսահակյան, 2020: 49):

Նամակագրության ընթացքում Իսահակյանը և Թումանյանը դրսևորում են առավելագույն անկեղծություն: Այս առումով մեջբերենք Վ. Մ. Գոլովկոյի հետևյալ միտքը. «Այսպիսով, նամակները դառնում են սյուժեի անբաժանելի տարրեր՝ ծառայելով որպես կարևոր, բնավորություն ներկայացնող միջոց» (Գոլովկո, 1992: 110): Դրանք լավագույնս բացահայտում են իրենց հեղինակների խոհերն ու մտորումները, գրական, քաղաքական, հասարակական հայացքները և, վերջապես, հայ մեծանուն գրողների սրտի ու մտքի ողջ պատմությունը:

¹ Թովիշյան Եղիշե (1872-1909) – դարասկզբի գրական և հասարակական գործիչ:

² Ղազարյան Արշակ – հրապարակախոս, հասարակական գործիչ, խմբագիր-հրատարակիչ:

1900 թ. Իսահակյանի գրած նամակն ընդգծում է Թումանյանի տաղանդի առանձնահատկությունը. «Ո՞նց է ընտանիքդ, բալեքդ... Մինչև այժմ մի բան չիրատարակեցիր – Դեպի անհունը, Սինամ թագավորը» (Իսահակյան, 2020: 49): Չնայած այն հանգամանքին, որ նամակագրության մեջ Իսահակյանը բողոքում էր անպատասխան վերաբերմունքից. «Ի սեր Աստծու, ում նամակ եմ գրում՝ պատասխանում չեն. խո՛, չե՞ն խոռվել ինձնից. բայց խոռվելու ի՞նչ տեղիք կա արդյոք ...Էլ ի՞նչ գրեմ,– գրելու շա՛տ բան կա, բայց նամակագրության թելը պիտի պահել, որ մարդ սկսի բացվել և գրե՛լ, գրե՛լ» (Իսահակյան, 2020: 49), մենք ստացել ենք վառ պատմություն երկու մեծ մարդկանց բարդ հարաբերությունների մասին:

Նամակներում արծարծված մի քանի հիմնահարցերի քննություն

Նամակներում նոր տվյալներ ու գնահատություններ կգտնենք գրողների, մշակութային ու հասարակական գործիչների և ուրիշ շատ հեղինակների վերաբերյալ. «Աղբալից նամակ չստացա, չգիտեմ ինչո՞ւ, հո՛ւ էդտեղից չէ հեռացել: Դերենիկից խաբար չունի՛ս. ի՞նչ է, դեռ չէ՞ եկել այդտեղ: Իսկ Շանթից ի՞նչ ունիս գրելու» (Իսահակյան, 2020: 62): Գրողները խոսում են հայ գրականության տարբեր ուղղությունների պայքարի, ճշմարտության որոնման, բարոյական բարձր պաթոսի և վառ, հումանիստական իդեալներ հաստատելու ցանկության մասին: «...Ես որ գամ, տեսնենք Վերնատան հալը ի՞նչ է լինելու. երևի առանց դրան մեր օրը սև կանցնի» (Իսահակյան, 2020: 62):

Գրողների նամակները բնութագրվում են ոճերի և թեմաների բազմազանությամբ. «...նամակի հեղինակը հեշտությամբ փոխում է թեմաները, հեշտությամբ անցնում է կարևորից և նշանակալիցից դեպի հումորային և անլուրջ» (Ուսպենսկի, 1970: 19): Իսահակյանի՝ Թումանյանին գրած նամակներից շատերը վերածվում են հետաքրքրաշարժ, հումորային դիպվածի. «Ի՞նչ եղավ, ո՞ր մնաց «Վտակը»³. հո չէ՞ ցամաքել. ձենը, քջքջոցը հասավ, բայց ինքը չկա. երևի մի լուրջ

³ «Վտակ» գրական-թանախրական ժողովածուում 1901 թ. տպագրվել են Ավ. Իսահակյանի «Ախ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ» և «Սիրո երգը» բանաստեղծությունները:

բան պատահած կլինի հետը...» (Իսահակյան, 2020: 62): Նրանց նամակագրությունն այդ դարաշրջանի ամենահետաքրքիր մարդկանց, նրանց ընկերությունների և անհամաձայնությունների պատմություններ են. «Դերենիկին էլ վաղը-մյուս օրը կճանապարհենք Մոսկովա: «Վտակից» որոշված է ինձ 50 ռ., բայց իզն ու թոզը չի երևա. ումից պիտի ստանալ. եթե Սրինգից⁴ է կախված, պոժալուստա նրան ասա,— իմ կողմից: Վարդագարյանը⁵ այստեղ աչքիս ընկավ» (Իսահակյան, 2020: 62):

Կան մտքեր, որ միմիայն նամակի միջոցով կարելի է արտահայտել՝ անձնական, անսահման մտերմիկ, խիստ հուշիկ ու գաղտնիաբար: 1901 թ. Իսահակյանն Ալեքսանդրոպոլից նամակ է գրում Թումանյանին. «Նստել ենք ես ու Հովհաննեսը⁶ գիշերը՝ ժամի 11-ին, թեյ ենք խմում և քեզ հիշում ու Անիի օրերը մտաբերում» (Իսահակյան, 2020: 64):

Գլխավոր հարցերում, սկզբունքային դիրքորոշումների մեջ նրանք կայուն համոզմունքների էին դավանում: Իսկ դա լավագույնս խտացված էր նամակներում: Անվանի գրողները 1902-1903 թթ. նամակագրության միջոցով երկխոսում են. «Ե՛րբ պիտի սկսես տպել պոեմաներդ. գավառները շարունակ հարցնում էին. ես էլ ասում եմ՝ զարնանը կտպե. աշխատի՛ր», քննարկում և հպարտանում են բարեկամական արձագանքներով. «Կարդացի՛ր Վեսելովսկու⁷ հոդվածը Русская» мысль XIX հայ պոեզիայի մասին» (Իսահակյան, 2020: 66): Նրանց նամակներից երևում է՝ սիրով ձեռք են մեկնում երիտասարդ գրողներին, օգնում՝ նրանց հավատալու իրենց տաղանդին.

⁴ Սրինգ – բանաստեղծ և լրագրող Արշակ Պետրոսի Մեիրաբյանի (1865-1921) ծածկանուններից մեկը:

⁵ Նկատի ունի մշակութային գործիչ Փիլիպպոս Վարդագարյանին (1858-1935):

⁶ Հովհաննես Կոստանյանը բանաստեղծներին լուսանկարել է Աշոտ Ողորմած թագավորի դամբարանի մոտ կանգնած: Այս լուսանկարը հետագայում բացիկ է դարձել:

⁷ Ռուս գրաքննադատ և հայ ժողովրդի բարեկամ Յուրի Վեսելովսկին (1872-1919) ուսումնասիրել և քարոզել է հայ գրականությունը, մշակույթը, պատմությունը:

«Կարդացի՞ր Հարություն» Թումանյանի⁸ գրածը «Լումայում»⁹. Նրա ամենալավ գրվածքն է: ...Լեռենցի,¹⁰ Ծառուղյանի, Մոճոռյանի¹¹ մասին...» (Իսահակյան, 2020: 66):

Յուրաքանչյուր նամակ յուրովի հետաքրքիր է. բացահայտում է Իսահակյանի և Թումանյանի ստեղծագործության, աշխարհայացքի առանձնահատկությունները, դրանց զարգացումը. «Սիրելի Օհաննես. ստացա բաց նամակդ... դու գրում ես թե՛ «Շատ կուզենայի տեսնել. մի բան այնպե՛ս է տանջում. ենթադրա՞ծ սխալ կլինի. կուզենայի խոսել...». սիրելիս, չեմ հասկանում այդ բառերը. ի՞նչ ես ուզում ասել. ի՞նչ տանջանք, ի՞նչ ենթադրություն...ի սեր Աստ>ծո. մի շուտով գրի՛ր, տեսնեմ բանի էությունը¹²...» (Իսահակյան, 2020: 85): Ինչպիսի հարուստ նյութեր կարելի է գտնել Իսահակյանի և Թումանյանի կյանքի վերաբերյալ նամականու մեջ. «Սիրելի Օհաննես. այսօր Նիկողից նամակ ստացա, որ գրում է, թե Թիֆլիզում ասելիս են եղել, որ ես սպանված եմ– տեսնում ես, որ շա՛տ սուտ լուր է. արդեն Բազվից ու այդտեղից և ուրիշ տեղերից ինձ հասել են այդ անհամ լուրերը...» (Իսահակյան, 2020: 86):

Ընկերական նամակներ

Ավ. Իսահակյանի 1900-1922 թթ. Հովհ. Թումանյանին գրած շատ նամակներ, այսպես կոչված, «ընկերական նամակներն» են: Այս եզրույթն ավանդաբար կիրառվում է 19–րդ դարավերջի և 20–րդ դարակզբի գրողների նամակներում: Գրողների «ընկերական նամակները» խճանկարային կառուցվածք ունեն. իրենց մեջ ներառում են թեմատիկ և ռճական, արձակի և պոեզիայի բազմազան շերտեր: Դրանք անկեղծ ու մտերմիկ են, տարբերվում են հնչերանգը, լեզուն և բովան-

⁸ Թումանյան «Հարություն» նույն ինքը՝ Մուրխաթյան (1869-1943) – ագուլիսցի բանաստեղծ, մանկավարժ:

⁹ «Լումայ», 1902, թ. 1, էջ 78-92, «Դպի-Մահրասա»:

¹⁰ Նազարբեկյան Ավետիս (1866 Թավրիզ - 1939 Մոսկվա) – բանաստեղծ, խմբագիր, հրապարակախոս՝ հայտնի Նազարբեկ, Ավետիս, Լեռենց ծածկանուններով:

¹¹ Մոճոռյան Պետրոս (1869-1939) – բանաստեղծ, մշակութային գործիչ:

¹² Խոսքը Ավ. Իսահակյանի սպանված լինելու կեղծ լուրերի մասին է, ինչին նա անդրադառնում է Հ. Թումանյանին գրած հաջորդ նամակում (1904, մայիսի 10):

դակությունը: Խոսելով գրական գործերի մասին՝ նրանք տալիս է ժամանակաշրջանին բնորոշ հետաքրքիր նորություններ «ազգային գրականության» մասին: 1902 թ. Իսահակյանը դառնացած դիմում է Թումանյանին, որ եկած օրից տրամադրությունը սաստիկ վատացել է, տխուր լուրեր, պատմություններ է լսում, և սիրտը կոտրված է. «Գնում ես այս ու այնտեղ և լսում ես սրտաճմլիկ բաներ – աղքատություն, սարսափելի աղքատությունը համատարած է. և պիտի իմանաս թե ի՛նչ կնշանակե մեր քաղաքի կամ մեր գավառի աղքատությունը. սև, չոր, ցամաք հացի են կապված՝ և դա էլ չկա. գյուղերում սովից ինքնասպանության դեպքեր են եղած...» (Իսահակյան, 2020: 67): Սրտամոտ ընկերոջը՝ Թումանյանին, Վարպետը գրում է, որ իրեն դուր չի գալիս ցուրտն ու ցեխը, որ ընկերներ չկան, որ մոլորվել է, սարսափելի ծանծրացել. «Թիֆլիզ վերադառնալ էլ չեմ ուզում. մի խոսքով մրից ելա, մրջյուն ընկա... Դուրս է գալիս, որ մեզ համար ոչ մի լավ տեղ գոյություն չունի. հիմա ես զգում եմ, որ ինձ արտասահմանում միայն լավ կարող եմ զգալ» (Իսահակյան, 2020: 68):

Նամակներում հաճախ երևում են նրանց կենցաղը, սոցիալական վիճակը և, իհարկե, տիեզերական մտերմությունը: 1902 թ. աշնանը Հովհաննես Թումանյանն առողջական խնդիրներ ուներ և բուժվելու նպատակով մի քանի ամիս գտնվում էր Աբասթումանում՝ Ֆիլիպ Վարդազարյանի ամառանոցում: Անհանգստացած Իսահակյանը Բաքվից գրում է. «Թիֆլիզից անցնելիս ասացին, որ էդտեղ ես, բայց առողջությանդ մասին՝ բացասական. ...և միշտ մտածում էի վերադ. քեզ անձամբ ճանաչողներին միշտ հարցնում էի. հիմա որ լա՛վ ես, ավելի՛ լավ» (Իսահակյան, 2020: 68): Իսահակյանը հաճախ էր գրում Թումանյանին իր վատ տրամադրության մասին. «Եթե այս գյուղական անկյունն էլ չունենայի՝ մի գազազած գազան պիտի դառնայի. գոնե այստեղ՝ ամեն բանից հեռու – լրագրություն, հայկական հիմար իրականություն, դաշնակցական ընկերներ... ապրում ես քո բոժոժի մեջ և տեսնում ես՝ թե շուրջդ որքա՞ն դատարկ է, կեղծիք է, և մարդ – իսկապես, մենակ է...» (Իսահակյան, 2020: 158):

1919 թ. Ավ. Իսահակյանը Ժնևից նամակ է գրում Հովհ. Թումանյանին և Դ. Դեմիրճյանին, որից երևում է, թե որքան մեծ նշանա-

կություն է տվել Վարպետը խոսքի մատուցման տոնայնությանը՝ մեջբերելով «սիրելիք, կարոտյալներս», «...անսահման տխուր եմ, որ հեռու եմ հայրենիքից և բոլոր հին, ազիզ ընկերներից...» արտահայտությունները, վերջին տարիներն էլ գերություն համարելով՝ գրում է. «Չափազանց ծանծրացել եմ Եվրոպայից, համը վաղուց ելել է այստեղ մնալու... առայժմ ո՛չ մի հնարավորություն չունիմ վերադառնալու. ճամբու ծախս չկա, և, հակառակի պես, ո՛չ մի տեղից հիմնկուհիմակ հնար չկա փող ստանալու» (Իսահակյան, 2020: 328):

Կան նաև լակոնիկ, բայց հումորային, հետաքրքրաշարժ բովանդակությամբ նամակներ. «Օհան ջան, շնորհավոր Նոր տարի. «Գեր-մարդ» դառնաս Սատանով» (Իսահակյան, 2020: 109): Իսահակյանն այս «մաղթանքը» հղել է՝ հիմնվելով Նիցշեի այն արտահայտության վրա, թե իր գերմարդուն սատանա են անվանելու: Կամ, նկատի ունենալով Թումանյանի մեծ գերդաստանն ու ընտանիքի բարեկամներին, գրում է. «Բարև ամբողջ պալատիդ» (Իսահակյան, 2020: 109):

Գրական ձեռքբերումներ

Նամակներում տեսնում ենք գրականության հարցերի քննարկումներ, սեփական ստեղծագործության վերլուծություններ և ստանում արժեքավոր տեղեկություններ: 1904 թ. հունվարի 16-ին տպագրված գրախոսականում Լեոն հայտնում է իր տեսակետը, թե գյուղաշխարհի զավակը՝ Թումանյանը, ««Անուշ», «Մարո» գյուղական-լեռնային դյուցազնական պեմները գրելուց հետո ոչ մի քայլ առաջ չգնաց» («Մշակ», հմ.2, 1904):

Սակայն ամենազգացմունքային և մտերիմ ապրումները փոխանցում և սեփական գնահատականն է տալիս Իսահակյանը. «...պիտի մի փոքր պարապվեմ, նոր բաներ ունեմ, նստեմ գրեմ, մտադիր եմ ոտանավորներիս ժողովածու¹³ տալ... «Անուշդ» ո՛ր մնաց.¹⁴ շարունակ նրա մասին եմ երագում. ձմեռը, որ կարդացիր՝ համը բերանս

¹³ 1902 թ. Բաքվում տպագրվել է Ավ. Իսահակյանի «Հին-նոր երգ ու վերքերից» (Բանաստեղծություններ) 24 էջանոց գիրքը:

¹⁴ Հովհ. Թումանյանը 1900-1903 թթ. աշխատել է «Անուշ» պոեմի վրա, անընդհատ վերամշակել, որի շնորհիվ այսօր ունենք պոեմի տարբերակներ:

մնաց. շուտ արա, տպիր, տեսնենք, լիովի վայելինք» (Իսահակյան, 2020: 69):

Նրանք մտահոգված են հայրենի գրականության ճակատագրով, ուշադրությամբ հետևում են գաղափարական տարբեր ուղղությունների գրողների կյանքին ու աշխատանքին. «Ի՞նչ է անում Աղայանը. առողջությունը ո՞նց է. Դերենիկից լուր ունի՞ս. օգոստոսին մի երկու-երեք օր մոտս էր. շա՛տ էր խեղճ ու ընկճված...Նիկոլը իրեն Պետերբուրգ է գցել. Քիլոն¹⁵ Քիլոնդեսը, կես կուշտ, կես սոված՝ կապրի: Շանթը, ասում են, վերադարձել է.¹⁶ ե՛րբ է բեմը կամ բիրժեն շանթելու. սպասում եմ նրա երևալուն օրեր» (Իսահակյան, 2020: 69):

Չնայած Իսահակյանի լավատեսությանն ու հումորին, նրանց գաղափարական համոզմունքներին՝ երբեմն Իսահակյանը բողոքում է Թումանյանին, որ դրությունը վատ է, անորոշ և չգիտի ինչ գրել. «...մինչև ե՛րբ պիտի հոգիներս բերաններս առած քաշ գանք մեր կեդրոնական, նվիրական, մեր հոգու իսկական պահանջներից հեռո՞ւ. ծերանում ենք՝ ոչինչ չարած: Մոսկվայում տպվում է մեր բանաստեղծությունների թարգմանաբար ժողովածու. տեսնենք ի՞նչ է լինելու. ես հույս չունիմ, որ հաջող բան դուրս գա. կոլորիտը, ինքնուրույնությունը չի կարող պահպանված լինել՝ մանավանդ երկուսիս գրվածքների» (խոսքը 1903 թ. Հովհ. Թումանյանի՝ Թիֆլիսում տպագրված «Բանաստեղծություններ» և Ավ. Իսահակյանի՝ Բաքվում տպագրված «Բանաստեղծություններ» ժողովածուների մասին է). «...երևի ես կգամ Թիֆլիզ. սկսինք մեր ոտանավորների ժողովածուն տպել, և անցնել լույք բաների. մեր վրա հույսեր կան դրված. բայց մենք մի քանի ծռտիպոտի բաներով խաբում ենք մարդկանց» (Իսահակյան, 2020: 70):

1903 թ. հուլիսի 21-ի գրած նամակում Վարպետը բարձր է գնահատում «Սասունցի Դավթի» սյուժեն, ոճերն ու դարձվածքները, ստեղծագործության առանձնահատկությունները, հումորը, գեղագիտական մտքի զարգացումը: Պոեմը եղել է ժամանակի գրաքննադատության ուշադրության կենտրոնում. «Իբրև թիրախ...պոեմը հիմնա-

¹⁵ Քիլոն – Նիկոլ Աղբալյանի կեղծանուններից մեկն է:

¹⁶ Լևոն Շանթը Եվրոպայից Թիֆլիս վերադարձել էր 1902 թ. հոկտեմբերի 3-ին, ինչը վկայում է այդ օրը Հովհ. Թումանյանին գրած նրա նամակ-բացիկը:

կանում համարվել է բնօրինակի սոսկ «ազատ թարգմանություն» հեղինակային ինքնուրույնությունից զուրկ գործ» (Մնացականյան Ե., 2024: 181): Իսահակյանը «Սասունցի Դավիթ» պոեմը համարում է «ուղղակի նյութի ոտանավոր, մի փոքր մշակած վերածում» (Մնացականյան Ե., 2024: 181): Նամակում տալիս է արժեքավոր խորհուրդներ. «...վախենում եմ, որ Միերդ վա՛տ դուրս գա. նա խոշոր տիպ է, բայց չարիքի, բացասական, դեմոնական. նրա վրա շա՛տ պիտի մտածես, մանավանդ որ նա կիսատ է, իսկ վերջը՝ շա՛տ վա՛տ, անմիտ. թեև կան ասողներ, թե՛ եթե Միերդ դուրս գա, հայու ստրկությունը կվերջանա, թագավորությունը կսկսվի, բայց դա չկա ժողովրդական վարիանտներում, այլ մի քանի ազգասերների բերանում, իսկ դո՛ւ պիտի հարազատ լինես ժողովրդին, և ոչ թե ազգասեր»: (Իսահակյան, 2020: 77): Անհնարին է չգնահատել Իսահակյանի և Թումանյանի նամակների գիտական նշանակությունը, առողջ քննադատական մոտեցումները. «Սասունցի Դավթիդ մասին.– նորից կարդացի.– միակ պակասությունը [նրա] նրանումն է, որ բնության նկարագրեր չկան, որոնք քեզ շա՛տ կհաջողվեին՝ իբրև էպիկի, բայց որ Սասունը չես տեսել, ի՛նչ նկարագրես. իսկ այն ևս ճշմարիտ է, որ ամբողջ պոեմը, կարծես, լրջորեն, խորը մտածած չես գրել, հավատարիմ ես մնացել նախկին որոշմունքիդ – մանուկների համար. բայց ավելի լուրջ և ծանրախոհ կարելի էր գրել» (Իսահակյան, 2020: 78):

1903 թ.-ին գրված նամակը ընթերցողին ներկայացնում է գրողների աշխարհայացքի և ստեղծագործական որոշակի հակասությունները.. «...նախօրոք զգում եմ Միերի անհաջողությունը.– Միերը կիսատ, ջարդված հերոս է. լիքը հակասություններով, երևի պետք է նորանոր վարիանտներ գտնել՝ լրացնելու այդ պակասը» (Իսահակյան, 2020: 79): Նամակը համոզիչ կերպով բացահայտում է երկու մեծերի գրական հայացքների ու դիրքորոշումների դաշտը. «...ժողովուրդը Միերին ատում է և այդ պատճառով նրանով շա՛տ չէ զբաղվել, տալով [ատելու] ատելի մոռացության, արհամարհանքի...» (Իսահակյան, 2020: 79):

Նամակների էջերում նրանց մեկնությունները՝ իրենց թարմությամբ ու իմաստնությամբ, մեր օրերում հնչում են արդիական, կենսա-

կան լիցքերով: Իսահակյանը 1903 թ. հուլիսին Ալեքսանդրապոլից գրում է Թումանյանին. «Քայց ինչ էլ որ լինին քո պոեմներդ՝ մեր գրականության մեջ դարաշրջան են կազմելու. ապրիր և ստեղծիր – ահա քո ուղին. մեզ թո՛ղ կռվի դաշտը, ինչ կուզե թող լինի...» (Իսահակյան, 2020: 79): Այս խոսքերը անկեղծ հիացումի ու բարձր գնահատության երաշխիք են: Նամակներում բովանդակային հարստությունը, լեզուն և ոճը հետաքրքրում է ընթերցողին. «Մեծ սպասելիք ունիմ Սինամ թագավորիցդ»¹⁷, քանի որ նրա մեջ կա քո անձնական ստեղծագործությունդ, կա սիմբոլ և գեղեցիկ պատկերներ. անհամբեր սպասում եմ գրքիդ լույս տեսնելուն՝ կարդալու համար «Անուշը»...» (Իսահակյան, 2020: 79): Դրանցում դիտարկվում է Իսահակյանի և Թումանյանի միջև երկխոսության հատուկ ձևը. «Սիրելի Օհանեսին բարևներ և բոլորին՝ վերնատանյաններին», քննարկվում են սոցիալական, փիլիսոփայական և գեղագիտական հարցեր. «Դերենիկի «Կյանքի տեսիլը»¹⁸ երևի լավ բան է դուրս գալու. տեսնենք» (Իսահակյան, 2020: 84):

Իսահակյանի նամակագրությունն Թումանյանի հետ մի տեսակ գրական-հասարակական հանրագիտարան է, որը զեկուցում է արժեքավոր տեղեկություններ ոչ միայն գրողների ու արվեստի գործիչների, այլև ստեղծագործությունների հրապարակման կամ արգելման մասին: Դրանք հարուստ և բազմազան փաստական նյութեր, որոնք անհրաժեշտ են հայագիտական ուսումնասիրության համար: 1904 թ. Նոր Նախիջևանից գրած նամակում Վարպետը գրում է, որ. «...սկսվել է հայկական կյանքով ու գրականությամբ հետաքրքրվիլը՝ բայց առաջին պլանում՝ Ավ. Ահարոնյանով. մեզ շատ չեն ճանաչում, իսկ Դերենիկին ու Շանթին՝ համարյա չեն ճանաչում. բայց Ծատուրյանը մեզնից խալճա է՝ հռչակված...» (Իսահակյան, 2020: 85): Հեղինակները ներկայացնում են բազմաչափ խնդիրներ՝ կենցաղային վայրիվերումներ, գրական գործընթացներ, եկեղեցական հանդիպումներ. «Սիրելի

¹⁷ Խոսքը հայկական ժողովրդական «Հազարան բլրույը» հեքիաթի մասին է, որի նախնական տարբերակներից է նաև. «Սինամ թագավորի հեքիաթը»: Ինչպես գիտենք, Հովհ. Թումանյանը այդպես էլ չիրականացրեց իր մտադրացումը՝ հեքիաթը մշակել որպես «արևելյան պոեմա»:

¹⁸ Դ. Դեմիրճյանի «Կյանքի տեսիլ» պոեմը լույս է տեսել 1913 թ. Թիֆլիսում:

Օհաննես, տեսա Հայրիկին¹⁹ և քո կողմից համբուրեցի նրա ս<ուրբ> աջը և ողջագուրվեցի. նա էլ քեֆդ հարցրեց» (Իսահակյան, 2020: 83):

Նամակները օգնում է մեզ ուսումնասիրել գրողների լրագրողական հմտությունները, հասկանալ նրանց տեսակետները, հասարակական կարծիքի դերը, ինչը շատ էին կարևորում. «...Ինչո՞ւ էդ գոմեշ Լեոն²⁰ էլ քեզնից վազ չի եկել. ի՞նչ է ուզում ասել այդ մարդը. պետք է դրան իրեն տեղը ցույց տալ. «Վերնատունը» պիտի սկսե այսուիետև շա՛տ եռանդուն գործել, և հասարակության մեջ իրեն մասին վկայե. մի հանդես հրատարակենք կամ այլ բան, մեր գեղարվեստական սկզբունքները պարզենք. մեր գրուպան ցույց տանք, թե չէ բոլորովին դրանք մեզ հող ու մոխրի հետ կհավասարեցնեն» (Իսահակյան, 2020: 85):

Անվանի գրողների նամակներից շատերը էպիստոլյար երկխոսության հատուկ ձևեր են, որտեղ քննարկվել են բազմաթիվ հասարակական-քաղաքական, փիլիսոփայական, բարոյա-կրոնական, գրական-գեղագիտական և ամսագրային թեմաներ. «Նիկոլից նամակ ունիմ, էն էլ ա<ստվա>ծապաշտ է դառել. միստիկ՝ և ինչ-որ նախախնամության կամքի երգողը՝ երևում է Յո. Соловьев-ի, ռուս այդ կրոնական-բարոյական ֆիլիսոփայի խիստ ազդեցության ներքո է: «Բանբերի» մեջ իմ մասին բան է գրել՝ մի երկու տող²¹...» (Իսահակյան, 2020: 85):

Դարասկզբին Իսահակյանն ու Թումանյանը առանձնահատուկ դիրք էին գրավում հայ գրական և հասարակական կյանքում: 1908 թ. Հովհ. Թումանյանը որոշել էր Ավ. Ահարոնյանի և Լեոյի հետ գնալ Եվրոպա, տեսնել այդ քաղաքակրթությունը: Սակայն դա չի իրականանում, որովհետև չի կարողանում գումար գտնել, ինչի մասին էլ 1908 թ. հուլիսի 20-ին գրում է նա Ավ. Իսահակյանին: Այդ պատճա-

¹⁹ Նկատի ունի կաթողիկոս (1893-1907) Խրիմյան Հայրիկին:

²⁰ Լեոն «Մշակ»-ի 2-րդ համարում միտումնավոր հողված էր գրել Հովհ. Թումանյանին վերաբերող:

²¹ Խոսքը Ավ. Իսահակյանի Բաքվում լույս տեսած «Բանաստեղծություններ» ժողովածուի մասին Նիկոլ Աղբալյանի գրած գրախոսականի մասին է՝ տպագրված Ս. Պետերբուրգ, «Բանբեր գրականության և արվեստի», գիրք Բ, էջ 189-198:

ռով էլ Վարպետը գրում է. «Լեոյի տոնին»²² կհասնիմ այդտեղ, հետո որոշենք՝ մարշրուտ կազմենք թափառելու՝ գնանք Լոռի, Սևան, Ալազ-յազ, Անի, Մրեն» (Իսահակյան, 2020: 155-156):

Եթե ավելացնելու լինենք ժամանակի հասարակական-քաղաքական իրավիճակների վերլուծությունները, նամակների կառուցվածքի ու մատուցման ձևերն ու սկզբունքները, ժամանակի գրական իրադարձությունների վերաբերյալ նյութերի տրամադրումը, պարզ կդառնա դրանց արժեքավորությունը: 1908 թ. Հովհ. Թումանյանն առաջարկում էր ստեղծել մի ուժեղ գրական ֆոնդ, որը կփոխեր հայոց ամբողջ գրականությունը, սկսնակ, նոր գրողներին ուժ կտար ու առաջ կքաշեր...²³, սակայն Իսահակյանն այդ հարցի շուրջ իր վերաբերմունքն է արտահայտում. «Ուզեցա ես էլ ձայնակցել քո առաջարկած գրական ֆոնդին, բայց այս օրերս այնպես եմ ատում հայություն, հայ ժողովուրդ, հայկական ապագա – որ սիրտս խառնում է դրանց մասին մտածելը. ես ապրում եմ հիմա բացառապես անցյալով (ոչ թե իմ անմիտ անցյալով) այլ հին ազգերի՝ История Ассирии, Индии, Халдеи, Мидии – շա՛տ եմ խորասուզվել Ձորաստրի և Բուդդիայի վարդապետության և կյանքի մեջ» (Իսահակյան, 2020: 158):

Իսահակյանն ու Թումանյանը հաճախ նամակներում քննարկում էին հարցերի լայն շրջանակ՝ ամսագրերի և գրական ստեղծագործությունները հրապարակելու, գրաքննության արգելքները շրջանցելու փորձերի, թերթերի, առանձին նյութերի գնահատման, գրող-ընկերների կյանքի և գործունեության վերլուծություններ: Օրինակ՝ 1908 թ. հունիսի 20-ին Ղազարապատից Թումանյանին գրած նամակում Իսահակյանը միանգամից ուզում է մի քանի կարևոր հարցերի պատասխան ստանալ մտերիմ ընկերոջից. «Էլ ի՞նչ գրեմ. արդյոք բանման եղավ գրական ֆոնդի հարցերի շուրջը. Շանթը տեղ հասա՞վ»²⁴.

²² Ավ. Իսահակյանը տոն ասելով նկատի ունի Լեոյի գրական գործունեության 25-ամյա հորեկյանը, որ նշվել է Թիֆլիսում, 1908 թ. մայիսին:

²³ Այդ ծրագիրն իրականանում է 1912 թ. հոկտեմբերի 10-ին, երբ կազմվում է Հայ գրողների Կովկասյան Ընկերությունը:

²⁴ Լևոն Շանթը 1908 թ. ամռանը Շվեյցարիայում էր՝ Լոզանում:

Աղբալը ո՞նց է զգում իրեն պաշտոնում. Դերենիկից նամակ կա²⁵. ինչպե՞ս է Աղայանի քեֆը, այդ ի՞նչ Քյոռ-օղլի է լույս բերել²⁶: Գիրքդ տպվեց-վերջացա՞վ Բազվում²⁷: Ո՞նց է Լեոյի քեֆը²⁸. վերջապես ո՞ր-քան հավաքվեց... երևակայիր Խզմայանի²⁹ պես համր ու հիմար մարդը: Ավետիսը³⁰ գնա՞ց արտասահման...» (Իսահակյան, 2020: 159):

Նրանց նամականին նորությունների, ամենօրյա ընթերցանության, բարեկամական հարաբերությունների յուրահատուկ օրինակ է: 1912 թ. հունվարին Սանկտ Պետերբուրգում սկսում է «Դաշնակցության գործի» քննությունը կամ ինչպես գրում էին՝ «159-ի դատավարությունը»: Իսահակյանը մարտի 22-ին մամուլում կարդում է, որ «95 արդարացվածների թվում Թումանյանը ևս «արդար ճանաչված և արձակված է»³¹ և շատ ուրախ էր, որ ապրիլի 14-ին բանաստեղծն արդեն Թիֆլիսում էր, խնդրում է նամակաբերին՝ պ. Ոսկան Մարտիկյանին³² «ծանոթացնես շրջանիդ հետ, սիրելի Լեոյի, Շիրվանզադեի և ուրիշների հետ. դուք ևս մոտիկ ծանոթացե՞ք հետը. հետաքրքիր մարդ է: Խնդրեմ ցույց տվե՞ք պարոնին հայկական հասարակական հիմնարկությունները, դպրոց, թատրոն, Բարեգործական ընկերություն» (Իսահակյան, 2020: 201):

²⁵ Դերենիկ Դեմիրճյանը 1908 թ. ամռանը Շվեյցարիայում էր, Լոզանում հաճախակի հանդիպում էր ունենում Շանթի ու Ջավահիրի, Ժնևում՝ Փիլիպոս Վարդապարյանի և այլ մտավորականների հետ:

²⁶ Ղազարոս Աղայանը «Քյոռօղլի» վիպերգությունից երեք գլուխ է մշակել, որը տպագրվել է փոքրիկ գրքույկով (Թիֆլիս, 1908 թվական, 29 էջ):

²⁷ 1908 թվականի սեպտեմբերին Բաքվում լույս է տեսնում Հովհ. Թումանյանի «Բանաստեղծություններ» նոր ժողովածուն, որը տպագրվել է Բաքվի Հայոց հրատարակչական ընկերության նախաձեռնությամբ:

²⁸ Լեոն առողջական խնդիրներ ուներ և 1908 թ. հուլիսին Ավ. Ահարոնյանի հետ գնում է Վիեննա՝ բժշկական քննությունների:

²⁹ Խոսքը մանկավարժ, հրապարակախոս Թադևոս Խզմայանի (1869-1918) մասին է:

³⁰ Ավետիս Ահարոնյանը 1908 թ. հուլիսի սկզբից արդեն Վիեննայում էր և մտադրություն ուներ Փարիզ գնալու:

³¹ Հորիզոն, 1912, թիվ 61, էջ 3:

³² Մարտիկյան Ոսկան (1868-1947) – մշակութային գործիչ, թարգմանիչ, պատասխանատու պաշտոններ է վարել թուրքական պետական հիմնարկներում:

Ազգային-հասարակական խնդիրների քննությունը նամակներում

Մեր աչքի առաջ հառնում են թափառական ու անհանգիստ խառնվածքի բանաստեղծները, հայդուկ-մարտիկները, ազգային-հասարակական գործիչները: 1919 թ. Ժնևից Իսահակյանը նամակ է ուղարկում Թումանյանին պ. Չխենկելու³³ հետ՝ կոշտ բովանդակությամբ. «...բայց ես այն համոզմունքն ունիմ, թե անցյալը չպիտի քրքրել... Ժողովուրդները ապրում են ներկայի և ապագայի շահերով. մենք ընկած ենք մահմեդական օվկիանոսի մեջ... ես այն կարծիքին եմ, որ ամենից հեշտ վրացիների հետ կարելի է բարի դրացիական հարաբերություններ ստեղծել – համակրոն, քաղաքակրթություն... համանման մտայնություն...» (Իսահակյան, 2020: 335):

Նամակները բացում են մեր առջև Իսահակյան-Թումանյան հսկաների հոգու, մտածողության, ներքին խոհերի ու տառապանքի, նախասիրությունների շատ հետաքրքիր ու անսովոր ծալքեր. «Ի՞նչ եք կառչել Արդահանին, Ախալքալաքին, տվեք նրանց, այնտեղ մի մասում հայություն չկա, մյուս մասն էլ պատմականորեն – Ջավախք – համարյա նրանցն է. և վերջապես ի՞նչ արժեք ունի նա մեզ համար: ...Ամոթ է, երկու պատմական հինավուրց դրացիներ իրար միս ուտեն և նպաստեն թաթարների ուժեղացման» (Իսահակյան, 2020: 335):

Ազգային անլուծելի խնդիրները, հարազատ ժողովրդի ճակատագիրը, սոցիալական անապահով վիճակը, հայ մտավորականների աստանդական կյանքն արտացոլվում էին նրանց նամականում. մեծանուն գրողներին միշտ էլ հուզել է «սարսափելի հարցը»՝ Հայաստանում սով կա... նրանք ոգեշնչվել են հային օգնելու, ճանապարհներ փնտրելու գաղափարներով. «...մեկ-մեկ, սրտի ցավով լսում եմ, թե մեր խեղճ ժողովուրդը քաղցած է՝ որովհետև վրացիք ճանապարհի չեն տալիս. և ուրեմն հենց այդ ճանապարհը ձեռք բերելու համար պիտի զիջեք» (Իսահակյան, 2020: 336): Անձնական մեծ ու փոքր շատ հանգույցներ երբեք հանգիստ չեն տվել նրանց: Նամակներում ցավ ու կսկիծով գրված տասնյակ էջեր դրա հաստատումն են. հայկական մամուլը, խաղալով ժողովրդի «գիտակցությունը մթագնողի» դերը,

³³ Չխենկելի Ակակի – վրացի քաղաքական գործիչ:

խլացնում էր ժամանակի ցավոտ հարցերը: Այստեղից էլ երկու գրողների մեղադրանքը ցանկացած արհեստականության, անանձնականության և որոշ թերթերի դեմ. «Դրան հասնելու ճանապարհը – իրար հասկանալն է. պարզել թյուրիմացությունները, զսպել մամուլը, և մանավանդ բռնել փոխադարձ զիջման ուղին» (Իսահակյան, 2020: 335): Շատ էական է ընդգծել, որ իրենց կռահումներում, հայտնած տեսակետների մեջ մեր ականավոր գրողները հիմնականում իրավացի էին, ճիշտ էին կողմնորոշվում քաղաքական ու ազգային բարդ իրադրություններում, գնահատում հայի և վրացու համերաշխությունը. «...թե Եվրոպան և թե Ռուսիան ավելի հարգանքով կվերաբերվեն, և ավելի դյուրավ կլուծվի մեր և նրանց անկախության հարցը, և թե ո՞րազոր՞ թաթարները ավելի կզսպվին... Շուտով կլուծվի հայոց հարցը, և հոռետես չլինինք՝ լավ կլուծվի» (Իսահակյան, 2020: 335):

Իսահակյանի և Թումանյանի միջև նամակագրությունը նաև արժեքավոր մեկնաբանություններ է պարունակում Կովկասի, հատկապես՝ Հայաստանի մասին: 1921 թ. Վենետիկից գրած նամակում երևում են Իսահակյանի՝ ռուսների և հայերի միջև թյուրիմացությունները հարթելու և կուլտուրական աշխատանքի լծվելու դիտարկումները: Իր կյանքի մի մասը Եվրոպայում անցկացրած գրողը բախտակից ընկերոջը փաստում է. «Անգլիան և Ֆրանսիան այնքան դաժան գտնվեցան, ինչքան Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում... պետք է երես դարձնել այդ ավազակներից, և մոտենալ Ռուսաստանին» (Իսահակյան, 2020: 362):

Թերևս, Իսահակյանի և Թումանյանի միջև նամակագրության վերջին էջը՝ գրված Վենետիկից, տխուր երևեջներ է պարունակում. հնչում է հայի համար սարսափելի հարցերից մեկը. «Եվ որոնք են այժմյան Հայաստանի սահմանները իրապես» (Իսահակյան, 2020: 377):

Եզրակացություն

Դժվար է չնկատել Ավ. Իսահակյանի և Հովհ. Թումանյանի նամականու գրապատմական և մշակութային դերը: Դրանց միջոցով ընթերցողները և մասնավորապես՝ գրական հասարակայնությունը ծանոթանում են մեծ գրողների մի նոր աշխարհին:

Նամակագրությունը ցույց է տալիս, թե որքան լայն էր նրանց քննարկած հարցերի շրջանակը, առաջին հերթին՝ հայ ժողովրդի ճակատագրի, հայի գոյության, այնուհետև գրողի մասնագիտության հետ կապված: Գրողների նամակներից կարելի է հետևություն անել, թե որքան հսկայական էր նրանց համար հասարակական կարծիքի ազատ արտահայտման կարևորությունը: Իսկ ժամանակային ու աշխարհագրական ընդգրկումները (Յուրիխ, Ղազարապատ, Թիֆլիս, Երևան, Ալեքսանդրապոլ, Էջմիածին, Բաքու, Վլադիկավկազ, Նոր Նախիջևան և այլն) նամակագրությունը դարձնում են էլ ավելի հետաքրքիր և արժեքավոր:

Այսօր անհրաժեշտություն կար ուսումնասիրելու երկու տաղանդավոր գրողների նամակագրությունը, որում արտահայտված քաղաքական, հասարակական, գրական-հրապարակախոսական գործունեությունը ծառայեց որպես հոգեբանական, բարոյական ուղեցույց ողջ հայ հասարակության համար: Իսահակյանն ու Թումանյանը ժամանակի հոլովությամբ բոլորի կողմից ճանաչված էին որպես հազվագյուտ տաղանդի, փիլիսոփայական մտքերի, տիեզերական զգացողությունների տեր գրողներ, գրչի վարպետներ՝ ամբողջությամբ ներգրավված հասարակական և գրական կյանքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գոլովկո Վ. Մ.**, Պատմվածքը որպես էպիկական արձակի ժանր, Սարատով, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի հրատարակչություն, 1992, 190 էջ:
2. **Թումանյան Հ.**, Դալի-Մահրասա, «Լումայ», 1902, թիվ 1, էջ 78-92:
3. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. XIII, Եր., «Էդիթ պրինտ» հրատ., 2020, 595 էջ:
4. «Հորիզոն», 1912, թիվ 61, էջ 3:

5. **Մնացականյան Ե.**, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ, Եր., ՎՄՎ-Պրինտ, 2024, 463 էջ:
6. «Մշակ», հմ. 2, 1904:
7. **Զեքերեց Լ. Վ.**, Գրական ժանրեր. տիպաբանության և պոետիկայի խնդիրներ, Մ., Մոսկվայի պետական համալսարանի հրատարակչություն, 1982, 192 էջ:
8. **Ջրբաշյան Է., Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, Եր., «Լույս» հրատ., 1972, 328 էջ:
9. **Ուսպենսկի Բ. Ա.**, Կոմպոզիցիայի պոետիկա, Մ., «Արվեստ» հրատ., 1970, 218 էջ:
10. **Ֆրեյդենբերգ Օ. Մ.**, Սյուժեի և ժանրի պոետիկա, Մ., «Լաբիրինթոս» հրատ., 1997, 445 էջ:

REFERENCES

1. **Golovko V. M.** , Patmivatsk'y vorpes epikakan ardzaki zhanr, [The short story as a genre of epic prose], Saratov, Moskvayi petakan mankavarzhakan hamalsarani hratarakch'ut'yun, 1992, 190 ej.
2. **T'umanyan H.**, Dali-Mahrasa, «Lumay», 1902, t'iv 1, ej 78-92.
3. **Isahakyan Avetik'**, Yerkeri liakatar zhoghovatsu [Complete Collection of Poems], h. XIII, Y., «Edit' print» hrat, 2020, 595 ej.
4. «Horizon», 1912, t'iv 61, ej 3.
5. **CH'ernets' L. V.**, Grakan zhanrer. Tipabanut'yan yev poyetikayi khndirner [Literary Genres: Problems of Typology and Poetics], M., Moskvayi petakan hamalsarani hratarakch'ut'yun, 1982, 192 ej.
6. **Jrbashyan E., Makhch'anyan H.**, Grakanagitakan barraran [Literary Dictionary], Ye., «Luys» hrat., 1972, 328 ej.
7. **Mnats'akanyan Ye.**, Hovhannes T'umanyani steghsagortsut'yunnery zhamanaki grak'nnadatakan mtk'i gnahatmamb [The Works of Hovhannes Tumanyan in the Assessment of the Literary Criticism of the Time], Yer., VMV-Print, 2024, 463 ej.
8. «Mshak», vol.2, 1904.
9. **Uspenski B.A.**, Kompozits'iayi poyetika [Poetics of Composition], M., «Arvest» hrat, 1970, 218 ej.
10. **Freydenberg O.M.**, Syuzhev yev zhanri poyetika [Poetics of Plot and Genre], M., «Labirint'vos» hrat., 1997, 445 ej.